ծախուած էսիր ենք» ասելով։ Նա այսօր հարստահարուած, քայքայուած է և այլևս ուժ չունի պահպանելու իր գոյութիւնը։ Համարեա ամբողջ գիւղը մտադիր է գաղթելու Թէհրան Թումանեանների գիւղերը։

Գիւղն ունի խղճուկ մի եկեղեցի Ս. Գրիգոր անունով։ Դպրոցից զուրկ է։ Գիւղացիութիւնը խարխափում է խոր տգիտութեան մէջ։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Ադքատ	38
2	Զուններոր	30
3	Միջակ	100
4	Ունեոր	50
5	Հարուստ	10
	Ընդամենը	228

Այս գիւղից 20 բոպէ հեռաւորութեան վրայ՝ դէպի հարաւ-արևելք, մի բարձրութեան վրայ կայ «Լուսհանգիստ» անունով մի ուխտատեղի. դա քառակուսի փոքրիկ մի սենեակ է, ուր հանգչում է մի գերեզման։ Աւանդութիւնն ասում է՝ շատ տարիներ առաջ պարսիկները Գրիգոր անունով մի մարդի բռնում և ստիպում են կրօնն ուրանալ, նա մերժում է և պարսիկները նրան սպանում են. հենց այդ ժամանակ լոյս է երևում։ Այժմ այդտեղը դարձել է սրբատեղի և ամեն տարի կանաչ-կարմիր կիւրակէին Փէրիայի զանազան գիւղերից հայերն այստեղ ուխտի են գալիս, մոմեր վառում, մատաղ կտրում և իրենց դարդերին դարման հայցում։ Այս ուխտատեղին, բացի նրանից, որ բաւականութիւն է տալիս ժողովրդի ջերմեռանդութեան, այլև ծառայում է իբրև աղջիկտեսի վայր Փէրիայի երիտասարդների համար. նամանաւանդ այդ նպատակին ծառայեցնում են «Մեծ-պասը» և «Համբարձումը»։

ՍՆԿԵՐՏ

—

Ներքին-Խոյգանից դէպի հարաւ, երեք քառորդ ֆար-